

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՏԱՐԵԼԻՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 24-ին, չորեքշաբթի.—Յիշատակ բիւրաւոր նահատակացն մեր, որք կատարեցան յընթացս համաշխարհային առաջին պատերազմի, յԱրեւմտեան Հայաստան:

Ապրիլյան Մեծ եղեռնի 76-րդ տարելիցն է:

Համազգային ուխտի, ոգեկոչման օր է այսօր ողջ հայության համար: Բովանդակ հայ ժողովուրդը, որ ի Հայաստան և որ ի Սփյուռս աշխարհի, մի պահ մտովին տեղափոխվում են սիրիական անապատներ. հայ Գողգոթա՝ Տեր-Զոր, ուր գազանաբար հոշոտվեցին հարս ու աղջիկ, ծեր, երեխա, որոնք նույնիսկ գերեզման չունեցան:

1915 թվականից ի վեր ամեն մի հայ, աշխարհի որ անկյունում էլ գըտնըվելիս լինի, ոգեկոչում է իր անմեղ արյունակիցների հիշատակը, վերհիշելով նրանց զոհողությունները, նրանց հայրենասիրությունը և վասն հայրենյաց ու վասն հավատո թափած նրանց արյունը:

Ապրիլ 24: Այսօր հայ ազգի զավակները ուղղվում են դեպի Ծիծեռնակաբերդի Նահատակաց հուշարձան: Հոգեհույզ երաժշտության մեղմ հնչյունների ներքո նրանք գնում են իրենց հարգանքի տուրքը մատուցելու անմեղ զոհերի անմեռ հիշատակին:

Սակայն գլխահակ ու արտաբեկ այս ուխտավորները Ծիծեռնակաբերդի կոթող-հուշարձանին նայում են ոչ միայն իբրև մահվան հուշարձան, այլև՝ հարության, վերածնվող հույսերի և պահանջատերի վճռականության:

Չիրականացավ թուրք արյունարբուների հայաջինջ ծրագիրը, քանզի Սարդարապատի հերոսամարտի և 1918 թվականի մայիսի 28-ի անկախության հռչակագրով Հայաստանը նվաճեց իր լինելիության իրավունքը՝ իր ապրելու և գոյատևելու գրավականը դարձնելով համայն հայության ազգային միասնությունը և ապրելու աննկուն կամքը:

Այսօր, ապրիլի 24-ին, ժամը 10.30-ին, Մայր Աթոռի միաբանությունը, գլխավորությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի, այցելեց Ծիծեռնակաբերդ և խաչակիր ծաղկեպսակ դրեց Նահատակաց հուշարձանին:

Առաջին անգամ լինելով, Ամենայն Հայոց Հայրապետը և Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը միասին գլուխ խոնարհեցին անմեղ նահատակների հավերժական հիշատակի առջև:

Հուշակոթողի անմար կրակի շուրջ կատարվեց հոգեհանգստյան հանդիսավոր արարողություն, երգվեցին «Գթա Տէր», «Ի վերին Երուսաղէմ»

շարականները, որից հետո Վեհափառ Հայրապետը «Հոգւոց» արտասանեց նահատակների հիշատակին:

Նույն օրը, ժամը 11-ին, Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ռումինիայի և Բուլղարիայի միացյալ թեմի առաջնորդ գերշ. Տ. Տիրայր արք. Մարտիկյանը և հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված Մայրավանքի ողջ միաբանությամբ:

Սրբազան պատարագին իրենց մասնակցությունն էին բերել բազմաթիվ հավատացյալներ և ուխտավորներ ինչպես Հայաստանի տարբեր շրջաններից, այնպես էլ Սփյուռքի գաղթօջախներից:

Ինչպես Եղեռնի հուշարձանի հոգեհանգստյան արարողությունը, նույնպես և Մայր տաճարում մատուցվող պատարագը ուղիղ եթերով հեռարձակվում էր Հայաստանի ողջ տարածքով մեկ՝ ի միսիթարություն և ոգեկոչում ազգիս հայոց:

Հավարտ ս. պատարագի, Նորին Սրբության գլխավորությամբ եկեղեցական թափորն առաջնորդվեց դեպի Մայր տաճարի շրջափակում բարձրացված Մեծ եղեռնի հուշարձան, ուր կատարվեց հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոն:

* * *

Նույն օրը, ժամը 15-ին, Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի ուսանողությունը այցելեց Ծիծեռնակաբերդ և թարմ ծաղիկներ զետեղեց Նահատակաց հուշարձանին: